

7 կամ 8000 մեդր. և այն միջոցներէն կը բարձրանան Պերմուտեան կզզիք: 52 և 33 լայնութեան աստիճանաց միջոց ումանք ինչուան 10000 մեդր և աւելի խորութիւն կարծեցին գտնել, սակայն ուրիշներ ալ փորձելով՝ հազիւ անոնց կէսին չափ գտան. բայց է որ առջիններուն չափը կամ լարը վրաբեր էր ովազյն ջրահոսանաց բռնութեամբ: Վասն զի այս կողմերս զանազան հոսանք կան ծովալին ջրոց, որը միով անուամբ լոցոցնեղ կոչեն բնափառք (Gold-Stream, Կոլֆ-Ստրիմ): և աղմայն սիր մը կը քէլ կը տանին, ուսկից զանազան մասեր վեր հանեցին Անդվիայիք և Ամերիկացիք. ընդհանրապէս սևագոյն և կազուն սիր մ'է, յորում կ'ապրին կենդանարոյսք զնտաբերք (globoideinées). որք բրածոյ կամ հանրային վիճակաւ ալ կը գտուին կաւուտ երամբ:

Միջներկարականի յատակն ալ ձիարալդարէն մինչև յԱղեքսանդրիա, շատ տեղ չափելով՝ երկու աւազան գտած են, որը իրարմէ կը բաժնեն բարձունք ընդ 100-150 արեկէ, երկայն. Կրինիիք, որք և ինչուան 350 մեդր կը մօտենան ջրոց մակերեւութիւն. ուսկից, ուրիշ կողմ՝ ՚ի գուրս ալ կ'ելին կզզիք, Սիկիլիա, Մալթա, և այն, և բարձրագոյն կասուրն կը լլայ Ետոնա հրաբուխ լեռը: Արևմտեան աւազանն, որ ՚ի կողմն ձիարալդարի, ընդհանրապէս հարթացատակ է, 2500է 2800 մեդր խորութիւն ունենալով, կափուղ և ցեխուս: Արեկելեանն Աղեքսանդրիոյ և Մալթայի միջոց՝ աւելի սիէմն է, և խորութիւնն ալ 2000է ինչուան ՚ի 4000 մեդր. բայց յատակի սիրը նման է առաջնոյն: Դիտուած ալ է, որ այս երկու աւազանաց եզերքն ալ՝ ուր որ 350էն ց' 550 մեդր խոր չեն խարակներով և բուստով կազմուած են:

Մինչ հիմա եղած քննութիւնք, ինչպէս վերը ըստածներնես ալ կ'իմացուի, թէ Սլովակականին և թէ Միջներկարականին մէջ այնքան անհարթութիւն կամ անհաւասարութիւն չերկեցուցին որչափ որ կը կարծուէր, երկրիս երեսին նմանցընելով. յանկարծ և շուտ մը ցածէ բարձր անցնիլ չկայ, այլ կամաց և քիչ քիչ, իբրև կանոնաւոր իմն գծով և ոչ խառն ՚ի խուռն. ոչ գուրի նման խորութիւնք կան և ոչ սեպաձե ցցուեալ ժայռք. բայց է որ ծովուն յատակն երկրիս յատակին օրինքը չէ, կամ նոյն գորութեանց ազգեցութեան տակ չէ. այս ովկիանոս ունի իր տափակ և դղուած անկողինը կամ տաշտը, Մատագիր քննիքը զայս ալ կը յիշեցնեն՝ որ թէ և ծովու մէջ ջրոյ ուժգին հոսանք կան, այլ շատ խոր չեն

ազգեր, ապա թէ ոչ հարկ էր որ յպտակն այլափոխէին տակն ու վրայ ընէին, ինչպէս որ երկրիս վրայ ժողովեալ ջրոց յատակն կ'ըլլայ. Այնպէս որ կ'ըսէ Ոզպուն Անդգիացի արբունի նաւապետն, (որ շատ քննութիւններ ըրած է Ալուանդականի և Միջներկարականի խորերուն), իթէ օր մ'ասոնց ջուրերը վերնային, յատակը պիտի երեկը նման Սահարա անաստի, կամ մարգագիտին հիւսիսային Ամերիկոյ և Բամբայիք՝ հարաւային Ամերիկոյ, որք ըստ կարծեաց գիտնականաց՝ ատենոր մէկմէկ ովկիանու էին, կամ ովկիանոսի մասն,

Անգղիոյ ուստամիական Ալբունի Ընկերութիւնն անցեալ տարւոյն սկիփը ճամբայ Հանեց Զելիկեար անուն նաւը, առաջնորդութեամբ Ռւայվիլ Թուման (Weyville) գիտնականի, չորս տարուան ժամազրութեամբ, յանձնելով երկրն շուրջ ըրորը պատել, ամեն կոզմ ովկիանու խորերը չափել, յատակին կազմուածքը քննել, ջրոց ծանրութիւնը կը սկսել լոցնեկվելին և ուրիշ հոսանք երագութիւնն և ընթացքը ստուգել, և մագնիսական քննութիւններ ընել: Ետա հետաքրքրութեամբ կը սպասան բնասէրք՝ այս նաւարկութեան բերելու խորային գիտելեաց. մենք ալ սպասանք անոնց հետ:

ԶԱՅԼԱՄՆ ՆՈՐ ՀՈԼԱԽՏԻՈՑ

Զայլամն՝ որոյ վրայ արդէն խօսեր եմք, ¹ թունոց այն զասակարգութեան կը վերաբերի, զոր բնապատումք երագուսն կ'անուանեն, սաստիկ երազընթացութեանը համար: Զայլամն թը ընդունոց մէջ ամենէն մեծամարմինն է. սրունքը բարձր, պարանցն երկայն և զլուխը պղտիկ: Աւնի թե, բայց այնպէս տկար և անզօր՝ որ թուշելու ամենին չի ծառայեր. և ահա ասօր համար է որ վերնախնաման տեսչութիւնը տուեր է իրեն իբր զէնք զերազընթացութիւն, որով միայն կրնայ ազատիլ

1 Տես ծն. հատ. 315:



ԶԱՅԼԱՄՆ ՆՈՐ ՀՈԼԱԽՆՏԻՈՑ

Թշնամնցն ձեռքէն : կտուցին երկայնութիւնը չափաւոր է, և ծայրը բուլթ կը վերջանայ . մեծակն է և արտևանունքը բիբով շրջապատեալ . լեզուն կարճ է և մանեկաձև , խածին շատ մեծ և աղիքը մեծաղանգուած :

Բնապատումք ջայլամն երեք ցեղ կը բաժնեն . առաջինն ափրիկեանն է՝ որ իր երկու մատուիր միայն կը տարբերի յայլց . երկրորդն ամերիկեանն՝ որ աւելի փոքրամարմին է և երեք մատնունի . իսկ երրորդն է Նոր-Հոլանտայի

ջայլամն , որ կը տարբերի առջի երկուքն զլիսուն վրայ բարձրացած ոսկէի փոքրիկ բրոկովլը : — Ափրիկէի ջայլամն միւսերէն աւելի մեծ է . բարձրութիւնը մինչև վեց կամ եօթնոտք կը հասնի , և կը կշռէ զրեթէ ութուն լիտր : Գլուխն և պարանոցն անօր մաղով պատած է . իսկ թիկունքը , կուրծքն և որովայնը սևագոյն մազով . բայց թեկերն ու տուտը սպիտակագոյն են . Աղջերքը պարանոցին նման գրեթէ բոլորուին լերկ են . և ուգերուն

երկու մատից մին միւսէն աւելի կարճ ու անեղոնդն է : Այս ցեղ ջայլամն կ'ապրի խումբ խումբ Ավրիկէի և Արարից աւագուտ անսպատից մէջ : Արագուն երիվարէ աւելի երագ է յընթաց, և ունի մարմնոյ ու ջաց այնպիսի կորովութիւն, որ մինչեւ երկու մարդ կրնայ կրել թիկանցը վրայ ու քալել :

Երկրորդ կու գայ Ամերիկայի ջայլամը, որ ինչպէս ըսփնք վերագոյն, երեք մատն ունի, և կիսով շափ պղտիկ է քան զառաջինն, որոյ փետուրը դորշախառն են և ամեննին յարդ չունին : Այս տեսակը կը գտնուի բազմութեամբ 'ի հարաւակողմն հարաւային Ամերիկայ :

Իսկ Նոր-Հոլանտայի ջայլամն, զոր և 'ի պատկերի ներկայացուցած ենք ընթերցողաց, շատ կը տարրերի առջի երկութէն, որուն թեսելը քան զանոնցն աւելի կարճ է և բոլորովին անօգուտ թերես և արգելք յընթանալ : Այս ցեղին թէ գլուխն և թէ պարանոցը մոխրագոյն փետրով ծածկուած է, և երագ է քան զառաջինն . բայց ինչպէս առաջնոցը՝ նոյնպէս և ասոր ցեղն երթալով կը ջնջուի :

Ջայլամի ճարպը կը գործածուի 'ի կերակուրս, կրնայ նոյն իսկ հացով ալ ուտուիլ . զոր Արաբացիք շատ տեսակ հիւանդութեանց դէմ իբրև զեղթափ կը գործածեն : թէ որ մէկը յօդից կամ երիկամանց ցաւ ունենայ, ցաւած կողմը կը շփեն նոյն ճարպով, մինչեւ որ 'ի ներքս թափանցէ . ապա հիւանդը կը պառկեցնեն բոցատոչոր աւազց մէջ, խնամքով ծածկելով դլուխը . ուր զօրաւոր արտաշնչութիւն մը կը հաստատէ զնա յառողջութեան :

Ջայլամի ճարպը շատ օգտակար է և լեարդի հիւանդութեանց . զոր նախ թեթև կերպով կը հալցնեն, և ապա յաեւլով վրան կոտոր մի աղ՝ կը խմեն իբրև զնուր . և ահա մէկէն սաստիկ որովայնալութեիւն մը կը պատճառէ և կարգէ դուրս կը ծիրէ մարմինը . և այս կերպով կ'աղատի հիւանդը մարմնոյն մէջ եղած բոլոր գէշ

ու վնասակար հիւթերէն, և կը ստանայ հաստատուն առողջութիւն :

Զայլամն բնութեամբ թաց ու խոտալից տեղուանք կ'ախորժի . և ուր որ անձրեսի կամ փոթորկի պատրաստութիւն կը տեսնայ, մէկէն դէպ 'ի հօն կը վազէ, թէպէտ և նյոն տեղն ամենահեռու ըլլայ : Անապատին մէջ թէ որ ուղենայ Արաբացին հովուի մ'իր խաչանցը ցրացած մեծ խնամքը գովել, և կամ անոր իր խաշանցը պէտք եղածը ժողվելու փոյթը կամենայ զըրուատել՝ այսպէս կ'ըսէ . Նման է զայլեւան, որը տեսանեւ անձրեսել փուրով անդր հասանեւ :

ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Ա. Բ Ե Խ Մ Տ Ե Ա Ն Ա Ս Ի Ո Յ Ց

Արևմտեան Ասիա կ'ըսուի կազրից ծովու գծով դէպ 'ի կողմէն Եւրոպից եղած Ասիայ մասը, կամ Թուրքաստանի և Հնդկաստանի արևմտակողմն եղած ախսարհները, որ և կնք պատմութեան մէջ երկրիս և ազգաց ամենէն նշանաւոր և յիշատակուած մասն է . երկիր նահապեսաց և հզոր տիեզերակալ տէրութեանց, երկիր ծագման կրօնից և փոփիսութեան մեծամեծ յեղափոխութեանց բաղդի . այն մասին մէջն են Հայաստան, Կովկաս, Բարեկոն, Պաղեստին, Արաբիա, Պարսկաստան և Փոքր Ասիա (Անատոլու) :

Այն երկիրն որ ըստ քաղաքական տեսութեան ամենէն առաջինն եղած է շատ արժանաւոր ալ է տեսութեան ըստ բուսաբերութեանն, որ ըստ զանազան աշխարհաց նորին բաւականապէս ալ զանազանիք վասն զի թէ և գրեթէ բոլոր արևմտեան Ասիա տաք կիմնայի վիճակեալ է, այլ կովկաս, Հայաստան և Փոքր Ասիա և ելի բարեխատոն տաքութեան . Միջագետք, Պաղեստին, Իրան և հիւսիսային Արաբիա՝ այրեցեալ գուտոյ մերձաւոր . իսկ հարաւայինն Արաբիա՝ այրեցեալ գոտուոյ տակ է :

կովկաս Սև և կազրից ծովուց միլոց